Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«Յունիբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
05.05.2004թ. N 11
Երևան

Մասնակցում էին
Ընկերության թվով 100 % ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի լիազոր ներկայացուցիչները.

Բանկի բաժնետերեր՝
1. Ժողովի նախագահ – «Յունիինվեստ» ՍՊԸ-ի և «DEBBAN INVESTMENTS LIMITED» ընկերությունների լիազորված անձ Գագիկ Զաքարյան - 49%
2. Ժողովի քարտուղար - «Աննաինվեստ» ՍՊԸ-ի լիազորված անձ Գ.Աբրահամյանը – 51%

Հրավիրվածներ՝
1. Խորհրդի անդամ – Ֆ.Սարգսյանը
2. Խորհրդի անդամ - Գ.Սրապյանը
3. Գործադիր տնօրեն – Վ.Աթայանը
4. Գործադիր տնօրենի տեղակալ – Վ.Եղիազարյանը
5. Գլխավոր հաշվապահ - Գ.Գրիգորյանը
6. Իրավաբանական բաժնի պետ – Օ.Առաքելյանը
7. Ներքին հսկող խմբի ղեկավար - Գ.Դրամբյանը
8. Հաճախորդների սպասարկման վարչության պետ – Վ.Աղաջանյանը
9. Վերստուգող հանձնաժողովի նախագահ – Ռ.Գալստյանը, անդամներ՝ Վ.Մկրտչյանը, Մ.Պողոսյանը
10. ֆինանսավերլուծական վարչության մասնագետ – Ս.Գրիգորյանը
11. ՀՀ կենտրոնական բանկից՝ Տ.Սարգսյանը, Ա.Ջավադյանը, Հ.Սուվարյանը
12. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ս.Աբրահամյանը
13. Ա.Աբրահամյանը
14. Ռուսաստանի բանկերի միության նախագահ Գ.Թոսունյանը

ՕՐԱԿԱՐԳ
1. *Բանկի գործունեության վերաբերյալ գործադիր տնօրենի հաշվետվության մասին.- զեկուցող Վ.Աթայան*
2. *Բանկի ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի հաշվետվության մասին -զեկուցող Ռ.Գալստյան*
3. *Բանկի 2003թ. ֆինանսական և հարկային հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների և մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքների հաստատման մասին - Գ.Գրիգորյան*
4. *Շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման, տարեկան շահութաբաժինների չափի հաստատման և գլխավոր պահուստին հատկացում կատարելու մասին -զեկուցող Գ.Զաքարյան*
5. *Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատման մասին - զեկուցող Վ.Աթայան*
6. *Բանկի 2004-2006թթ ռազմավարական ծրագրի մասին - զեկուցող Վ.Աթայան*
7. *Բանկի երկրորդ կիսամյակի միջոցառումների ծրագրի մասին - զեկուցող Վ.Եղիազարյան*
8. *Խորհրդի կազմի հաստատման մասին - զեկուցող Գ.Զաքարյան*

ԼՍԵՑԻՆ
Վ.Աթայանին – 1-ին հարցի վերաբերյալ – ներկայացրեց Բանկի ընդհանուր զարգացման տենդենցները նախորդ տարվա ընթացքում, Բանկի ձեռքբերումները և հեռանկարային զարգացման միտումները առաջիկա տարիների ընթացքում:

ԼՍԵՑԻՆ
Ռ.Գալստյանին – 2-րդ՝ Բանկի ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի հաշվետվության մասին. Ամփոփ ներկայացրեց Բանկի ֆինանսական տարվա արդյունքների մասին:

ԼՍԵՑԻՆ
Գոհար Գրիգորյանին – 3-րդ հարցի վերաբերյալ, ներկայացրեց, որ ըստ Վերստուգող հանձնաժողովի կողմից ներկայացված, ինչպես նաև Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմված եզրակացության, Բանկի

1. ակտիվները կազմել են 13725392 հազ. ՀՀ դրամ
2. պարտավորությունները՝ 10749912 հազ. ՀՀ դրամ
3. կապիտալը՝ 2975480 հազ. դրամ
4. տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը՝ 915683 հազ. ՀՀ դրամ
5. տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը՝ 453857 հազ. ՀՀ դրամ
6. զուտ տոկոսային եկամուտները կազմել են 461826 հազ. ՀՀ դրամ
7. ոչ տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը 311549 հազ. ՀՀ դրամ
8. ոչ տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը 367090 հազ. ՀՀ դրամ
9. զուտ ոչ տոկոսային ծախսերը կազմել են 55541 հազ. ՀՀ դրամ
10. զուտ մասհանումները ընդամենը 348154 հազ. ՀՀ դրամ
11. շահույթը մինչև հարկվելը կազմել է 58131 հազ. ՀՀ դրամ
12. հետաձգված հարկային ակտիվները 1793 հազ. ՀՀ դրամ
13. զուտ շահույթը կազմել է 37921 հազ. ՀՀ դրամ գումար:

Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ պարզվել է, որ 01.01.2003 թ-ից մինչև 31.12.2003թ.

1. զուտ դրամական հոսքերը՝ մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունը, կազմել է 804329 հազ. ՀՀ դրամ
2. զուտ դրամական հոսքեր գործառնական ակտիվներից և պարտավորություններից՝ 3562129 հազ. դրամ
3. դրամական զուտ հոսքերի ներդրումային գործունեությունից՝ 647855 հազ. ՀՀ դրամ
4. դրամական միջոցների հոսքերի զուտ աճը կազմել է՝ 3678630 հազ. ՀՀ դրամ գումար:

Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:

Քվեարկեցին.
կողմ - 100 ձայն
դեմ - 0
ձեռնպահ - 0

ԼՍԵՑԻՆ
Գ.Զաքարյանին 4-րդ հարցի կապակցությամբ:
Առաջարկեց Բանկի ստացված ողջ շահույթը չբաշխել և թողնել Բանկի հեռանկարային զարգացմանը, իսկ հաշվի առնելով Բանկի կանոնադրության դրույթները՝ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Վ.Աթայանին 5-րդ և 6-րդ հարցերի կապակցությամբ:
Ներկայացրեց Բանկի 2004-2006թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը և առաջարկեց Բանկի աուդիտն անցկացնելու համար հայտարարել մրցույթ ՀՀ-ում գործող անկախ աուդիտորական կազմակերպությունների միջև, և Բանկի աուդիտն անցկացնելու համար ընտրել հաղթող կազմակերպությանը:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Վ.Եղիազարյանին 7-րդ հարցի վերաբերյալ:
Ներկայացրեց Բանկի երկրորդ կիսամյակի միջոցառումների ծրագիրը և առաջարկեց հաստատել այն:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Գ.Զաքարյանին 8-րդ հարցի՝ Խորհրդի կազմը հաստատելու վերաբերյալ:
Առաջարկեց Բանկի Խորհրդի կազմը թողնել անփոփոխ:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

Ժողովի վերջում ելույթ ունեցավ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ.Սարգսյանը՝ շնորհավորեց ժողովի մասնակիցներին և հայտարարեց, որ Բանկը կատարել է կենտրոնական բանկի բոլոր հանձնարարականները և նշեց, որ կենտրոնական բանկը բարձր է գնահատում Յունիբանկի հետ համագործակցությունը:

Քվեարկության և ելույթների արդյունքների հիման վրա Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2003թ. Բանկի և մասնաճյուղերի տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:
2. Ֆինանսական տարվա ընթացքում ստացված 37921 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթը չբաշխել, իսկ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:
3. Բանկի աուդիտն իրականացնելու համար հայտարարել մրցույթ ՀՀ-ում գործող անկախ աուդիտորական կազմակերպությունների միջև, և Բանկի աուդիտն անցկացնելու համար հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր:
4. Հաստատել Բանկի 2004-2006թթ ռազմավարական ծրագիրը:
5. Հաստատել Բանկի երկրորդ կիսամյակի միջոցառումների ծրագիրը:
6. Բանկի Խորհրդի կազմը թողնել անփոփոխ:

Նախագահ Գ. Տ. Զաքարյան

Քարտուղար Գ.Ա.Աբրահամյան